ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 113-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 265-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՄԱՍԱՄԲ՝ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 265-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ՄԱՍՈՎ, ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի և 265-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. 2020 թվականի հունվարի 22-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումը:

2. Սույն գործով դիմողը վիճարկում է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ «Տնտեսական, տեխնոլոգիական, կազ-

մակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված»:

Դիմողը գտնում է, որ օրենքում այնպիսի պայման սահմանելը, որը կարող է հիմք հանդիսանալ խախտված իրավունքի այնպիսի վերականգնում հայցելու և ստանալու համար, որը չի համապատասխանում և համարժեք չէ թույլ տրված բուն խախտմանը, դրա իրական կամ հնարավոր հետևանքներին, որով առանց անհրաժեշտության սահմանափակվում են գործատուի հիմնական իրավունքները և ազատությունները, հակասում է Սահմանադրության պահանջներին:

3. Դիմումի և կից դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սույն գործի վարույթը մասամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, ենթակա է կարճման:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների

խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակ-տիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն ամրագրվել է նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով: Իսկ հիշյալ օրենքի 5-րդ մասի համաձայն, ի թիվս այլ հիմքերի, անհատական դիմումներով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ դիմողը չի սպառել դա-տական պաշտպանության բոլոր միջոցները:

Սույն գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2019 թվականի մարտի 12-ի որոշման ուսումնասիրությունից հետևում է, որ ինչպես վերաքննիչ բողոքով, այնպես էլ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի հիշյալ որոշման մեջ բացակայում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ որևէ անդրադարձ: Այլ կերպ՝ դիմողը Վերաքննիչ քաղաքացիական դատարանում չի բարձ-րացրել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի հետ կապված հարց, դրանով իսկ չի օգտվել վերադաս ատյանում դատական պաշտպանության իրավունքից: Ուստիև դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցնե-րը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի և 265-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրու-

թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, կարճել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

12 մայիսի 2020 թվականի
ՍԴԱՈ-100